

օրինական կարգով Սսի թեմականներից, վաւերացած Կ. Պօլսոյ Կենդ. Վարչութիւնից և հաստատուած Օսմանեան պետութիւնից: Մենք ուրախ ենք որ Սահակ սրբազանը ընտրուեց Սսի կաթողիկոս օրովհետեւ նորին սրբազնութիւնը օրինաւորութեան սահմանում վերջ տուեց ա. Էջմիածնի և Սսի բազմայոյզ խնդրին, վերջ ստացան այն այլ ընդ այլոյ, դուցէ և նենգամտութեամբ տարածուած լուրերը, թէ ջանքեր են լինում Սսի կաթողիկոսութիւնը միացնել Կ. Պօլսոյ պատրիարքութեան հետ ու Տաճկաստանի անկախ կաթողիկոսութիւն հրատարակել: Սրբազան Սահակի ընտրութեամբ և օժմամբ Հայաստանեայց ա. եկեղեցու միութիւնը ամրապնդուեց: Տայ Աստուած, որ Սահակ կաթողիկոսի երկայնաւորը իշխանութեամբ հայ եկեղեցին վայելէ ցանկալի անդօրրութիւն: Սահակ կաթողիկոսը իւր օժման օրը ա. պատարագին, յիշել է ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ Ա.-ին:

Յօսիկ Եպիսկոպոս



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .

ՆԻՒԹԵՐ Ս. ԳՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

I.

ԷՋՄԻԱԾՆԻ Հ. 153 ԶԵՌԱԳԻՐԸ

Էջմիածնի մատենադարանի բազմաթիւ ձեռագիր օրինակների մէջ 153 թիւը մինչև վերջի ժամանակներս համարւում էր ոչ միայն Էջմիածնի մատենադարանի այլ առհասարակ ա. Դրբի հնագոյն օրինակը: Այդ թիւը կար-

ծիրքը առաջ էր եկել ձեռագրի վերջում գտնուած յիշատակարանից, որի մէջ կայ՝ թէ գտնուել է Կիլիկիայում Հեթմոնի որդի Լեոն թագաւորի օրով, հայկական Ո (1151) թուականին: Այդ թուականը անխտիր և առանց քննութեան ընդունել են Դանիէլ վարդապետը, Էջմիածնի ձեռագրերի առաջի ցուցակագրողը ¹⁾ և սրանից առնելով՝ Հ. Գ. Զարբանալեանը ²⁾. այդ թուականը արտագրել էինք և մենք մեր ձեռագիր ցուցակի մէջ, որը կազմել ենք ուղիղ տաս տարի առաջ: Ստկայն երբ 1902 թուին աշխատում էինք ս. Գրքի հայկական թարգմանութեան պատմութեան վրայ ³⁾ և փորձեցինք աւելի մօտուց ծանօթանալ այդ հնագոյն համարուած ձեռագրի հետ, նկատեցինք մի շարք փաստեր, որ անհնար էին կացուցանում ձեռագրի հնութիւնը: Անհաճոյ էր միայն, որ անկարող էինք աշխատանքի ընթացքում նորից նայել բուն ձեռագրին և պիտի բաւականայինք մեր ունեցած նկարագրութիւնից, որովհետեւ այդ աշխատանքը կատարում էինք Պետերբուրգում. ուստի որոշեցինք Մայր Աթոռ վերադառնալուց յետոյ զգուշութեամբ քննել ձեռագիրը և լրացնել մեր տեղեկութիւնները: Առանց այդ էլ՝ հիմնուած մեր նորանկատ փաստերի վրայ ձեռագրի ժամանակը 1153-ից փոխեցինք մինչև 1292 թուականը և այժմ, երբ մեր առաջ դրած է բուն ձեռագիրը, ոչ առանց ներքին գոհունակութեան նոր փաստերով կամենում ենք հաստատել, որ մեր ենթադրած ժամանակը հիմնաւոր է եղել:

Ձեռագիրն ունի աւելի քան յիսուն յիշատակարան, որոնց մեծ մասը կրկնութիւններ են, կամ ունին աննշան տեղեկութիւններ: Հետեւելով ցուցակագրութեան համար մեր ընդունած ծրագրին, մենք ցուցակը կազմելիս չենք արտագրում բոլոր յիշատակարանները, այլ միայն կարեւ-

1. Մայր Ցուցակ Ձեռ. Մատ. ս. Էջմիածնի, էջ 10:

2. Հայկական Թարգմանութիւնք Նախնեաց էջ 122:

3. История перевода Библии на армянский языкъ, СПб. 1902 г. էջ 108—117.

ւորները, բայց միշտ նշանակում ենք ձեռագրի այն երեսները, որտեղ յիշատակարան կայ։ Սակայն կարևորն անկարևորից ընտրելու ժամանակ մեր ուշագրութիւնից խուսափել է մի խիստ կարևոր յիշատակարան, որը մեզ ցոյց տուեց Մայր Աթոռիս միաբան Եղիա վարդապետը, թէև նշանակել ենք երեսը, ուրեմն իւր ժամանակին մենք էլ ենք տեսել։ Եթէ առաջուց արտագրած լինէինք այդ յիշատակարանը, ձեռագրի ժամանակը որոշելու խնդրում այնքան ժամավաճառ չէինք լինիլ։ Այդ յիշատակարանը թանկագին է ոչ միայն ժամանակի, այլ ուրիշ տեսակէտից ևս. ուստի կամենում ենք հետեւեալում կանգ առնել նրա վրայ և տպում ենք ամբողջ բնագիրը։

Թղ. 418^բ «Փառաւորէ մարդասէրն Աստուած զհոգի Տեառն ներսէսի Լամբրօնեցւոյ. որ ի վերայ ամենայն յաւելուածոց բարեացն զոր պարգևեաց ազդիս մերում թարգմանութեամբ և մեկնչութեամբ բազմաց տառից և դայս ևս յաւել. շնորհելով մեզ ի միասին զհաւաքումն աստուածաշնչիցս. նախանձ բարի արկանելով ամենեցուն. զի մինչև ցնա ոչ երևէր թէ լիեալ էր յազգիս մերում. և ի մերումս ժամանակի գրեթէ երկուս կամ երես միայն տեսաք յաւելեալք զկնի նորա. և տես զտարտամութիւն ազգիս. զի այժմ հարկւր ամ կամ թէ ևս աւելի ի նմանէ մինչ առ մեզ և այնչափ գոն աճեցեալք որչափ ասացաք։

Եւս առաւել զարդարեացէ Աստուած զհոգիս սրբոց թարգմանչացն. որք աստուածաբար երախտաւորք են ազգիս հայոց. որք բազում երկամբ և աշխատութեամբ այսպիսի անկողոպտելի գանձ պարգևեցին մեզ։

Ընդ որս և զմեզաւք մեռեալս ոգի, որ մեծաւ յուսով և փափագանաւք ի սմա վաստակեցի. աղքատ կենաւք և տկար մարմնով թափառական յօտար դաւառի. վասն որոյ աղաչեմ ոչ ձանձրանալ ասել զՏէր ողորմին. որով և ձեզ լիցի և Քրիստոսի փառք յաւիտեանս» 1)։

1. Յ. Թօփնեան, Յուդակ ձեռագրաց Խ. վ. Դադեանի, էջ 6։ Այս ցուցակը թէև տպագրութեան էր յանձնուած 1898 թուին,

Ներսէս Լամբրոնացին մեռել է 1198 թուի յուլիսի 14-ին. այդ թուականի վրայ աւելացնելով 100 տարի կատանանք 1298: Այդ հաշուով պէտք է որ մեր ձեռագիրը գրուած լինի կամ այդ ժամանակ, կամ փոքր առաջ ու յետ: Բայց քանի որ ձեռագրի գրիչ Մովսէսը հարիւր կոյտ տարէթիւ է գործածել հազիւ թէ հիմք ունենանք 1298 թիւը հաստատուն համարել: Ակներեւ է, որ Մովսէս վարդապետի հարիւր տարին ուրիշ նշանակութիւն ունի. նա ուղում է ցոյց տալ որ հայերի մէջ ա. Գրքի օրինակներ պակաս են. որ Ներսէս Լամբրոնացուց յետոյ, թէև հարիւր կամ աւելի տարի է անցել, այնուամենայնիւ ինքը երկու կամ երեք օրինակ է միայն տեսել: Ինչ ասել կուզի որ տարիի այդպիսի պայմանական գործածութիւնը ճիշտ լինել չի կարող: Մեզ համար պարտաւորեցուցիչ պիտի լինի, որ հարկաւոր է ձեռագրի ուղիղ տարէթիւը 1290-ական թուականի շուրջը որոնել, մի փաստ, որ ոյժ է տալիս մեր ենթադրութեանը: Բայց դժբանից առաջ ծանօթանանք Մովսէս գրչի մեր կարծիքով խիստ հետաքրքիր անձնաւորութեան հետ:

Ձեռագիրը Մովսէս վարդապետը մենակ չէ գրել այլ Ներսէս քահանայի հետ: Վերջինս գործը չաւարտած վախճանուել է, մնացած աշխատանքը Մովսէսի վրայ թողնելով: Մովսէսը իւր արձակ և ոտանաւորով գրուած բազմաթիւ յիշատակարանների մէջ մի քանի տեղ իւր մասին միայն ակնարկներ է անում և հաւանականօրէն վերջի յիշատակարանումն էր աւելի որոշ տեղեկութիւն տուել իւր և ձեռագրի մասին, որը գժբախտաբար կորած է, ձեռագրի վերջի մասի հետ, այն է, Յովհաննու Յայտնութեան և Հանդստեան գրքերի հետ: Յիշատակարանի կորուստը անդառնալի է, ոչ այդպէս կորած գրքերինը, որովհետև ձեռագրի ճշտագոյն ընդօրինակութիւնը կայ Խա-

բայց կազմողի բացակայութեան և ուրիշ պատճառներից լոյս տեսաւ միայն անցեալ 1903 թուին:

չիկ վարդապետ Դադեանի ժողովածուի Աստուածաշնչի մէջ, որի շնորհիւ հեշտ է կորուստը լրացնել:

Մովսէս վարդապետի մասին ձեռագրից այսքանն ենք իմանում, որ նա սովորական գրիչ չէր. այլ հմուտ էր հայոց լեզուի և կրօնական գիտութիւններին, լաւ գիտէր յունարէն, սիրում էր օտանաւորներ գրել, ոչ առանց յայտնի յաջողութեան: Նա ապրում էր իւր հայրենիքից դուրս, օտարութեան մէջ. անձնուպէս տկար էր, նիւթական կարօտութիւն էր քաշում և հոգով չափ ցաւում էր իւր ժամանակուայ եկեղեցական անարգ և անկարգ վիճակը նկատելով: Վերջին հանդամանքը արտայայտում է նրա մի ոտանաւոր գեղեցիկ յիշատակարանում, որը թէև արդէն տպուած է¹⁾, բայց իւր մտքերով այնքան թարմ է և հետաքրքրական, որ կրկնութիւնը անտեղի չի լինիլ, մանաւանդ որ տպագրութեան մէջ կան թերութիւններ:

Պղ. 448^m «Ողբեցաւ թէ պարտ լիցի. Յայժմու ժամուս մեզ պիտանի:

Մանաւանդ թէ ևս յաւէտ, Գան թէ յանցեալն և յապառնի:

Զի ընդ մարմնոյ վիշտ վտանգի. Հոգւոց յաւէտ տարածեացի:

Եկեղեցիք անսխյթ լինի, Կարգ և օրէնք խափանեացի:

Յառաջնորդաց անսխյթ լինի. Վըրէժխնդիւր ոչ գըտանի:

Լիրբն համարձակ անամօթի. Սաստ յումեքէ ոչ լինիցի:

Ոչ պատուհաս յանդգնողի. Ակնառութիւն յաղթահարէ:

Եւ շողոքսթն առ ինքն քարշէ:

Փառամուքքն տիրեցին. Աւղիղքն ի յետս ընկրկեցին:

Թիւրեալն յօրէնսըն պատուեսցի. Աւրինապահն արհամարհի:

Տըգէտք յառաջեցին. Ճշմարտակոհք ծաղը լինին:

1. Յ. Թօփքեան, Յուցակ Զեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, Վաղարշապատ, 1898, էջ 6: Այս Աստուածաշունչ ձեռագիրը ճշտութեամբ վերարտադրել է Մովսէսի գրած բոլոր յիշատակարանները, միայն գրչի անունը թորոտի փոխելով:

Նկեղեցիք նրսեմասցին. Պայծառութիւնքն ջրեսցին,
 Քահանայք խիզախեսցին. Նւ անպատշաճքն գործեսցին.
 Ժողովուրդք մոլորեսցին. Նւ անտէրունջք յար շրջեսցին:
 Զգիրս օրինաց թէ ոք յիշէ. Յամենենունց նախատ կրէ.
 Նարուզարդան զայս ոչ գործէ. Այլ որ յաւէտ է
 Քրիստոնէ:
 Իշխանայք թէ յիշեսցին. Բանս ոչ բաւէ զի պատմեսցին.
 Այլ որ արար բարձի թողի. Գարձեալ թէ նոյն ողորմեսցի:
 Որ է օրհնեալ յամենայնի. ամէն»:

Թէ որտեղ է Մովսէսը գրել իւր ձեռագիրը, որոշ չի
 ասուած, բայց անկասկած է, որ գրել է Կիլիկիայում, որ-
 տեղ հաւանական նա տեսել է աստուածաշնչի այն երեք
 չորս օրինակը, որը յիշատակում է Մեր այդ համոզումը
 ծագում է բնագրի որոշ յատկութիւններից և մէկ էլ երբ
 մօտիկուց ենք ճանաչում Մովսէսի անձնաւորութիւնը: Ահա
 թէ նա ինչ է գրում իւր մասին. «Նս անարժան Մովսէս
 զաստուածաշունչս իմովք ձեռօք գրեալ, դամբարանի
 սուրբ Լուսաւորչին նուիրեցի. ի լեւիինն Սեպուն, ի Մա-
 նիայ այսոն: Եթէ ոք՝ ո և իցէ՝ նենգել խորհիցի յափըշ-
 տակելով՝ կամ գողանալով՝ կամ թէ առաջնորդ վաճա-
 ուեսցէ, կամ ումեք շնորհեսցէ, կամ՝ ընդ իրիք փոխանա-
 կեսցէ, դատախազ կացցէ նմա սուրբ Լուսաւորչին առաջի
 Գրիստոսի և աստ մի հասարակեսցէ զաւուրս իւր» Լու-
 սաւորչի դամբարանի յիշատակութիւն կայ նաև ձեռագրի
 ամենավերջի յիշատակարանում, որտեղ գրիչը դարձեալ ա-
 նէժք է կարգում, բայց բոլորովին ուրիշ մտքով. Նա ասում
 է, որ Լուսաւորչի դրանը կան այս աստուածաշունչը և ուրիշ
 վարդապետական գրեանք, նղովք նորան, ով «յաղագս
 յաշաղանաց խնայէ՝ որ ի շուրջակա վանօրայքդ դասա-
 տուն լինի»: Միւս կողմից էլ ձեռագիր կարդացողներին
 խելացի խրատ է տալիս. «ապա որ կարդասցէ խնամով
 պահեսցէ և այս բաւական է. զի զէնն զինաւորին է»: Այս-
 պիսի մարդասէր և ուսումնասէր պատգամ է թողել իւր
 յաջորդներին, որովհետև անձամբ շատ նեղութիւններ է
 կրել արտագրութեան համար օրինակ գտնելու. «Ով ինձ

աստուածաշունչ մի էր տուեալ՝ բացականչում է նա (Թղ. 454^ա) «գողջիր գերի էր աղատեալ՝ մանաւանդ թէ ևս առաւել»։ Իսկ մի ուրիշ անգամ գրում է (Թղ. 409^ա). «Ով գիրք տեսանէ գրած՝ կարծէ դիւրաւ եկեալ յառաջ, ոչ այդպէս՝ գողցես մահու չափ»։ Պարզ է, որ Լուսաւորչի դամբարանը գրութեան տեղը չէ. այլ Մովսէսը պատրաստի ձեռագիրն է նուիրել այդ վանքին։

Մի տեղեկութիւն ևս և վերջանում է յիշատակարանների տուածը Մովսէսի անձի մասին։ Մի տեղ ասուած է (Եղ. Թղ. 130^ա). «Հնոցն արարած ոչ գտանի գլխահամար աստուածաշնչից գրենաց։ Եւ որ մերն էր բաբունապետ, է գոր յինքենէ շարժեալ և է գոր ի մէնջ թախանցեալ եղև» և ապա թէ գրել է ցանկերը։ Բաբունապետի անունը դժբախտաբար չկայ, բայց գտնելը դժուար չէ։ Պա Գէորգ Սկեռացին է, ինչպէս փոքր յետոյ ցոյց կտանք, հետեապէս Մովսէսն էլ նրա այն աշակերտն է, որը իւր սիրեցեալ ուսուցչի մահուան առթիւ գրել է. «Ղրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար յերջանիկ ըաբունապետն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գէորգ Լամբրոնացի»¹)։

Մի շարք յաջող զուգագիրպութիւններ անհերքելի հաստատում են այդ ենթադրութիւնը և աւելի պայծառ գոյնով ներկայացնում Գէորգ Սկեռացու և նրա աշակերտների գործունէութիւնը մեր գրականութեան պատմութեան մէջ, յատկապէս աստուածաշնչի բնագրի տարածման խնդրում և ակներեւ են կացուցանում թէ այդ անձինք ինքնուրոյն ինչպիսի ծառայութիւն ունին մատուցած ու Գրքի հասկանալու խնդիրներում։

Իսկ թէ ի՞նչ հիմունք ունինք Մովսէսին Սկեռացու աշակերտ համարելու, այդ դժուար չէ հաստատելը։ Գրիգորիս վարդապետ Խարբերդցին, Մովսէսի աշակերտը, մի ձեռագրում, գրուած 1314 թ. այսպիսի ծանօթութիւն ունի. «Ի գալ վարդապետին Մովսէսի ի Կիլիկիոյ բազում գրեհօք, յորդորեալ և առեալ զմեզ՝ բնակեցաք ի Դարա-

1. Ալեշան, Սիսուան, էջ 104։

նաղեաց գաւառն, ի լեւառն սուրբ և մեծ Լուսաւորչին մերոյ ամս վեց»¹⁾։ Այս ծանօթութիւնը հակադրելով Մովսէսի վերը տալիս բերածների հետ, որ նա վարդապետական և այլ գրքեր է նուիրել Լուսաւորչի դամբարանին, ի միջի այլոց իւր ձեռքով գրած աստուածաշունչը, յիշելով որ նա իրեն պանտուխտ է կոչում, — նա երզնկացի լինելով՝ ասլրում էր Կիլիկիայում, — բնականաբար պիտի մտածենք, որ Գրիգորի յիշած Մովսէսը և Լուսաւորչի դամբարանը շէնացնողը կարող է նոյն անձը լինել։ Բայց երբ այդ գեղեցիկ տեղեկութեան հետ զուգորդենք Մովսէսի հաղորդածը ներսէս Լամբրոնացու մասին, որից ինքը 100 տարի յետոյ էր ասլրում, որ նա իւր ուսուցչին բաբունապէս է կոչում — «բազում անգամ կոչեցեալ է Գէորգ՝ բաբունապէս և ուսուցիչ և խրատիչ», վկայում է Ալիշանը (Սիսուան, էջ 106) —, և վերջապէս երբ ի նկատի ունենանք նրա ուսանաւորները աստուածաշնչի ձեռագրի մէջ և համեմատենք նրա չափական Ողբը Գէորգ Սկեռացու մասին գրած (Սիսուան, էջ 104, 105), այն ժամանակ հազիւ թէ կասկած մնայ, որ աստուածաշնչի գրիչը Սկեռացու յայտնի աշակերտ Մովսէսն է։ Հաւանական նա Կիլիկիայից Մանեայ այսրը եկել է իւր մեծ ուսուցչի մահուանից յետոյ։ Գրիգորիս վարդապետի վկայութիւնը, «բնակեցաք ի Գարաննաղեաց գաւառն ... ամս վեց» արդեօք Մովսէսին է վերաբերում թէ միայն իրան գրչին, որոշ չէ։ Եւ որ գլխաւորն է անյայտ է թէ ինչպէս պիտի հաշուենք վեց տարին, արդեօք 1314 թուից, երբ գրուել է Գրիգորի ձեռագիրը, թէ էլ առաջ, մանաւանդ որ հանգուցեալ Ալիշանը այս ձեռագրի մասին միայն այսբանն է ասում՝ «գեղեցկագիր մատենիւ միով», մինչև անգամ չէ էլ ասում թէ այդ ինչ մատեանն է։ Արդ՝ եթէ այդ տեղեկութիւնները փոքր ինչ աւելի լինէին, գուցէ հնար կլինէր գտնելու Մովսէսի Կիլիկիայից տեղափոխուելու մոտաւորական տարին։ Յամենայն գէպս նա 1300 թուից առաջ

1. Ալիշան, Սիսուան, էջ 106, ճն. 2։

չէ գնացել Դարանազիք և ոչ էլ 1308-ից յետոյ, այսինքն 1314-ից հանած 6 տարի:

Մենք կարող ենք մինչև անգամ ասել, թէ ինչն է նրան ստիպել թողնել Կիլիկիան: Նա ինքը Երզնկացի էր, ուսման ծարաւը նրան տարել էր Կիլիկիա, Գէորգ Սիււաացու և ուրիշ նշանաւոր Կիլիկեցի վարդապետների մօտ: Երբ վախճանուեց իւր սիրեցեալ ուսուցիչը, որին նա այնքան սրտառուչ խօսքերով դուռատում և ողբում է, նա որոշում է թողնել պանդխտութիւնը և վերադառնալ իւր հայրենի գաւառը, Երզնկա, շէնացնել իւր բնիկ ծննդավայրի վանքերը, ուսում և կրթութիւն տարածել շրջակայ վանքերի մէջ: Այդ ներքին պատճառներին նպաստում են արտաքինները: Վերևի մեր առաջ բերած յիշատակարանը կենդանի վկայ է, թէ ինչպիսի բարոյական անկեալ վիճակ ունէր ժամանակի իշխանութիւն ունեցող հոգևորականութիւնը: Այդ ծանր վիճակը նկարագրելու համար Մովսէսը ողբերգակ է հրաւիրում, որովհետև եկեղեցու առաջնորդները սանձարձակ էին դարձել, լրբերը համարձակ և անաւօթ. յանդուգները չէին պատժոււմ, իսկ ասպարէզը պահուած էր շողորորթների: օրինապահները արհամարհում էին և ագէտները առաջ ընկնում: Եւ խակապէս երբ բարոյական անկումը այդքան հրէշաւոր չափեր էր ընդունել, երբ նկատելի էր շրջապատի ողբալի պատկերը, կաշառակերութիւն, միամիտների խաբելու վայրագ միջոցներ, ակնյայտի գողութիւն, հասարակաց ստացուածքի վատնումն վատ հոգևորականներին յատուկ ախտեր, ինչ կարող էր անել Մովսէսի պէս մաքուր զգացմունքներով, ժամանակի լաւագոյն կրթութիւնը ստացած մի մարդ, քան վանք, այրերի մէջ քաշուել և փորձել փոքր, սահմանափակ շրջապատում տարածել իւր ցանկացած լոյսը: Դժբախտաբար Մովսէսի նկարագրած պատկերները մեր պատմական կեանքի ընթացքում շատ անգամ են կրկնուել և զօրեղ կերպով զգացուել են հէնց այն ժամանակամիջոցներում, երբ ազգի մէջ երեւացել են ինքնադործունէութիւն, գաղափարական ձգտման բուռն ցան-

կութիւն: Հանդարտ և քայքայիչ դործող խաւարի այժը յենուած ամբոխի կուրութեան վրայ, անխտիր միջոցների մէջ և ձեռին ունենալով իրական իշխանութիւնը, լոյսից միշտ սարսափել է և առաջ քաշել «լրբերին», «յանդգնողներին», «շողոքորթներին», «փառամոլներին», «ազէտներին»: Ո՞վ Մովսէս գրչի գրածը կարդալով, չի մտաբերիլ նրա մեծ անուանակցի գրած սրտառուչ ողբը, ո՞վ չի մտաբերիլ Խորենացու ոսկոռների քաշէքաշ տալու մասին պատմած ցաւալի աւանդութիւնը, Ղազար Փարպեցու նշանաւոր թուղթը՝ ուղղած իւր պաշտպան Վահան Մամիկոնեանին և շատ համանման գէպեր:

Մովսէսի նոր գործունէութիւնը Լուսաւորչի ճգնութեան սրբազան վայրում պէտք է որ բեղմնաւոր եղած լինի: Այդ մենք կարող ենք մակարերել միմիայն ի նկատի ունենալով նրա հիմնած գրադարանը—ուրիշ տեղեկութիւն առ այժմ չունինք—և այն լայն լուսամիտ հայացքը, որ Մովսէսը ունէր այդ գրադարանի մասին: Նզովքի արժանի է համարում այն մարդուն, որ դաստասաց մարդուն ուղած գիրքը չի տալ. նզովք է կարգում իրենից յետոյ եկող վանահայրերին և ամեն մէկին, որ իւր հիմնած գրադարանից և իւր նուիրած գրքերից կվաճառի, կգողանայ, մէկին կնուիրի, կամ ուրիշ բանի հետ կփոխի: Գիրքը պէտք է մնայ վանքում և ծառայի իւր նպատակին. ինչպէս զէնքը զինուորի համար, նոյնն է ուսման ձգտող մարդու համար գիրքը:

Ընթերցողը թող մեղ ների, որ բուն խնդրից փոքր ինչ շեղուեցինք: Այդ մենք արինք, որովհետեւ Մովսէսը այն բաղմաթիւ առաքինի և մաքուր ճանապարհով դործող անհատներից մէկն է, որոնք մեծ գործերի համար հիմնաքարեր են պատրաստում և որոնց անունը դժբախտաբար մոռացութեան է արւում:

Ինչպէս տեսանք, Մովսէսը վկայում է, որ երբ գրքում էր իւր ձեռագիրը Հ. Կ. համար գեռ չկային նախադրութիւններ և ցանկեր և ինքը գրեց այդ բաները իւր ձեռագրի աղատ մնացած երեսներում: Ամենահին

ձեռագիրը, որի մէջ հանդիպում ենք նախագրութիւններին և ցանկերին, գա նոյն Գէորգ Սկեռացու աշակերտ Գոյներ Երիցանցի 1292 թուի գրածն է։ Այնուհետև ունինք 1295 թ. ձեռագիր այդ յաւելումներով, հետևապէս Մովսէսի ձեռագիրը Գոյներ Երիցանցի գրածից ուշ լինել չի կարող, իսկ թէ որքան առաջ պիտի տանել, այդ արդէն դժուար է ասել։ Այն փոքրիկ յիշատակարանը, որ կայ գրքի վերջում և պատճառ է եղել ձեռագիրը 1151 թուին վերագրել, իսկապէս թուական չունի. Ու տառը որ կարդացել է Դանիէլ վարդապետը, իսկապէս այնքան անորոշ է, որ կարող է նաև ուրիշ տառ լինել։ Նրա միւս տեղեկութիւնը՝ թէ ձեռագիրը գրուած է Հեթումի որդի Լևոնի օրով (այսինքն 1271—1288 թ.), կարող էր ուղիղ լինել և մեզ իրաւունք տալ ձեռագիրը մինչև այդ ժամանակը առաջ տանել, եթէ ուրիշ արդեւք չլինէր։ Ձեռագրի մէջ, լուսանցքների վրայ, հայկական ցանկերի համապատասխան ա, բ, գլխահամար ցոյց տուող թուերի կողքին հանդիպում ենք «համար ֆռանգին», այսինքն լատինական գլխաբանութեան թուերը, որ առաջին անգամ կիրառութեան մէջ մտցրել է Հեթում Բ. թագաւորը, ամենայն հաւանականութեամբ, երբ 1292 թ. աշխարհից և թագից հեռանալով մտաւ լատինական Պրանցիսկեան վանքը։ Միայն այս էլ պիտի ասենք, որ «ֆռանկաց համար» գրութիւնը առերեւոյթ փոքր լինչ տարբերւում է բուն ձեռագրի գրից և հետևապէս կարող էր յետոյ էլ գրուել։ Բայց առ հասարակ կասկածելի է փոքր յիշատակարանի գրութիւնը, որը ոչ միայն գրութեան ձեւովն է տարբերւում մնացեալից, այլ գրուած է հին քերութեամբ տողերի վրայ, դժգոյն թանաքով և դժուար ընթերցանելի է։

Այս բոլոր թեր և դէմ ենթադրութիւնները հանգում են այն հաստատուն կէտին, որ Մովսէսի ձեռագիրը գրուած է, ոչ ուշ քան 1292 թ. հա. Գոյներ Երիցանցի ձեռագիրը, իսկ թէ որքան առաջ, այդ մասին առ այժմ այս կարող ենք ասել։ Էջմիածնի մատենադարանում պա-

հուած են նշանաւոր Յովհան արքանդրայր արքեպիսկոպոսի երկու ձեռագիր աստուածաշունչ, մէկը թերի, գրուած ՉԺԲ—1263 թուին, միւսը լրիւ ՉԺԹ — 1270 թուին: Երկուսն էլ սկզբում ցանկեր և նախադրութիւններ չեն ունեցել, երկրորդի մէջ 1358—1365 տարիների մէջ աւելացրել է Թորոս Ռուբինեանց գրիչը, երբ ձեռագիրը հասել էր Կոստանդին թագաւորի ձեռքը: Այդ ձեռագրի գրութեան թուերից յետոյ պահուած են երկու ձեռագիր Կիլիկիայից, ՉԼԴ—1285 թուականից և Մխիթար Այրիվանեցու համանուն վանքում գրուած նշանաւոր ճառքնախորը 1272—1288 թ.: Առաջի երկուսի հանգամանորէն նկարագրութիւնը չունինք ¹), իսկ Մխիթարի օրինակում չկան ցանկեր ու նախադրութիւններ: Յովհան արքանդրայրը շատ ժամ էր Դէորդ Սկիւռացուն, որը սորան էր յանձնել խմբագրելու Գրիգոր Վկայասէրի թարգմանել տուած Գործոց Առաքելոցի մեկնութիւնը և հայ ընթերցողին մատչելի դարձնելու ²): Եթէ Յովհանը Դէորդի նոր աշխատութիւնը իւր ձեռագրի մէջ չի մտցրել, պարզ է, որ այդ աշխատութիւնը մինչև 1270 թուականը գրուած չէր: Մխիթարի ձեռագրի մասին նոյնն ասել չենք կարող: Մխիթարը տեղեւո շատ հեռու էր և թէև կարող էր Սկիւռացու ճանապարհօրդութեան ժամանակ՝ Սալմաստվանք, Բջնի և Խոր-Վիրապ նրա հետ հանդիպած լինել, բայց այդ ենթադրական է և յամենայն դէպս այն ժամանակների համար հեշտ չէր այդքան շուտ դրական նորութիւնը Կիլիկիայից հասցնել Այրիվանք:

Հետեւապէս եթէ Մովսէսի ձեռագրի գրութեան վերջի ժամանակակէտը 1292 թուականն է, ամենաառաջը կարող է տարուել միայն մինչև 1270 թ.: Սոյն այդ տարիների մէջ պէտք է դնել Դէորդ Սկիւռացու ձեռքով Հ. Կ. համար կազմած ցանկերն ու նախադրութիւնները:

1. Զարբանալեան, ՀԺՆ էջ 157 և Н.П.Б. на А. Я. էջ 92:

2. Զարբանալեան, Պ. 2. Դ. էջ 582, 700 և Կարապետ եպիսկոպոս Սասնացւոյ՝ Ներքողեան յաղագս ս. Մեղրոպայ, Վաղարշապատ, 1897 էջ 6:

Այդ հարցը ունի իւր գրականութիւնը. նրա մասին Վենետիկի Մխիթարեան հայրերը, ինչպէս մեր գրականութեան շատ սուրիշ խնդիրների մասին, գրական շրջաններում ստեղծել են յայտնի աւանդութիւն, որի հերքելը որքան էլ փաստական, հեշտութեամբ տեղի չի ունենում: Յոյս ունինք, որ մեր առաջագրած խնդրում այսինքն Հ. Կ. նախագործութիւնների և գլուխների գրութեան ժամանակի հարցում կարծիքների յեղաշրջումն առաջ բերելը առանձին դժուարութիւնների չպատահի: Այդ հարցի մասին մենք կգրենք հետևեալում:

Միւսոյ վարդապետ

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Բարեգործութիւններ. Պօլսի թերթերում կարդում ենք հետևեալ կարեւոր նուիրաբերութիւնները:

Վիեննայի մէջ հաստատեալ տիկին Սղաւնի Քէրէոտէճեան, որ Աւստրիացիի մը հետ ամուսնացած է, փափաքեր է որ իւր և ամուսնոյն մահուանէն ետքը Ազգին մ'նայ տեղւոյն դրամատան մէջ ունեցած 1000 ոսկին, և այս փափաքին գործադրութեան համար այժմէն կատարուեր են օրինական գործողութիւնները:

Իզմիրի մաքրատան արկղակալ Ստեփան էֆ. ճշմարտախօսեան իւր անշարժ կալուածները 1500 ոսկի արժողութեամբ ազգին նուիրեր է: պայմանաւ որ ինքն ու ամուսին տիկինը մինչև ցմահ ստանան անոնց վարձքը:

Աղնաուրեան Կարապետ էֆ. ասկէ առաջ 1000 ոսկիի փոխատուութիւն մը պիտի ընէր եկեղեցիի (Իզմիրում) հասութարեր տուներ կառուցանելու համար և 10 տարի յետոյ իր դրամը եւ պիտի առնէր, մինչդեռ հիմա ստոյգ աղբիւրի տեղեկացանք թէ հիւանդանոցի ետեւի կողմը գտնուող ընդարձակ դեանին վրայ 30—35 տուներ պիտի կառուցանէ, որոնց համար պիտի ծախսէ 3000 ոսկիի գումար մը, թերեւս ալ աւելի: Այդ